ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Էրիկ Գրիգորյանի՝ 2017թ. նոյեմբերի 15-17-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Էրիկ Գրիգորյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Բոնն)

2017թ. նոյեմբերի 15-17-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության քարտուղարություն

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն՝ Միավորված ազգերի կազմակերպության Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմերի 23-րդ համաժողովին:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

2017թ. նոյեմբերի 15-17-ը Բոննում /Գերմանիայի Դաշնային Հանրապետություն/ կայացած ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի Կողմերի 23-րդ կոնֆերանսի բարձրաստիճան հատվածի շրջանակներում մասնակցել եմ նախարարների, բարձրաստիճան պաշտոնյաների կլոր սեղանների քննարկումներին և երկխոսություններին:

Ներկայացվել և քննարկվել են բազմաթիվ կարևորագույն հարցեր, այդ թվում՝ Փարիզյան համաձայնագրի իրականացման հետ կապված նախապատրաստական աշխատանքները, Կլիմայի փոփոխության պատճառով կորուստների և վնասների Վարշավյան միջազգային մեխանիզմները և այլն:

Հանդիպումներ եմ ունեցել Էստոնիայի, Սինգապուրի, Վրաստանի, Հունաստանի, Արգենտինայի պատվիրակությունների ղեկավարների հետ, ԳԷՀ-ի գլխավոր քարտուղարի, Լեհաստանի պատվիրակության հետ:

Համաժողովին մասնակցել են մի քանի տասնյակ երկրների ղեկավարներ, ներառյալ՝ Գերմանիայի Կանցլերը և Ֆրանսիայի նախագահը:

Ռուսաստանի պատվիրակության ներկայացուցիչը իր ելույթում մասնավորապես նշել է, որ կլիմայի փոփոխության բնագավառում ֆինանսավորում է հատկացվել Հայաստանին:

Ադրբեջանի պատվիրակության ելույթում կրկին հնչեցվել են մեղադրանքներ Հայաստանի նկատմամբ, որ վերջինիս կողմից «Ադրբեջանի տարածքների 1/5-ի գրավման պատճառով Ադրբեջանը չի կարող պատշաճ կերպով կատարել իր ստանձնած հանձնառությունները», որին հակադարձել եմ իմ ելույթի ընթացքում՝ մասնավորապես նշելով, որ «Արցախի Հանրապետությունը իր անկախությունը ստացել է այն նույն իրավական հիմքերով, ինչ Ադրբեջանը, և եթե Ադրբեջանը իրապես ցանկանում է լուծել կլիմակայական և բնապահպանական խնդիրները, ապա բոլոր հնարավոր հանդիպումները չարաշահելու, սուտ և պատմությունը խեղաթյուրող հակահայկական քարոզչության փոխարեն պետք է համագործակցի Արցախի Հանրապետության կառավարության հետ:

3. <u>ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Հունաստանի պատվիրակության հետ խորացնել համագործակցությունը բնապահպանական միջազգային գործընթացներում, Սինգապուրի հետ տուրիզմի և էկոտուրիզմի բնագավառում Հայաստանի պոտենցիալի ներկայացման շուրջ, Լեհաստանի պատվիրակության հետ՝ բնապահպանական տեխնոլոգիաների շուրջ համագործակցության մասին և Էստոնիայի պատվիրակության հետ՝ բնապահպանական թույլտվությունների և լիցենզիաների օնլայն համակարգի ներդրման համար էստոնական կողմի աջակցության շուրջ: